ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ընդդեմ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ (Հռոմ. 14:1-15:13-ից)
SPECIAL TOPIC: CHRISTIAN FREEDOM VS. CHRISTIAN RESPONSIBILITY (from Rom.14:1-15:13)

Ա. Հռոմեացիների 14:1-15:13-ը փորձում է հավասարակշռության բերել Քրիստոնեական ազատության ու պատասխանատվության պարադոքսը:

Բ. Այս գլուխն ընդգրկող խնդիրը հավանաբար Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև եղած լարվածությունն էր: Դարձի գալուց առաջ հրեաները հակված էին օրինապահ լինելու, իսկ հեթանոսները՝ անբարո: Հիշեք, որ այս գլուխը ուղղված է Հիսուսի անկեղծ հետևորդներին: Այն ուղղված չէ մարմնավոր՝ աշխարհիկ հավատացյալներին (տես՝ 1 Կորնթ.3:1): Երկու խմբերին էլ վերագրված է ամենաբարձր շարժառիթը՝ դրդապատճառը: Երկու կողմում էլ ծայրահեղությունների դեպքում վտանգն առկա էր: Այս քննարկումը արտոնություն չէր տալիս պերճախոս օրինապահությանը կամ ցուցամոլ ազատականությանը:

Գ. Հավատացյալները պետք է զգույշ լինեն, որպեսզի իրենց աստվածաբանությունը կամ էթիկան՝ բարոյագիտությունը չդարձնեն չափանիշ բոլոր մյուս հավատացյալների համար (տես՝ 2 Կորնթ.10:12): Հավատացյալները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, սակայն հասկանան, որ իրենց աստվածաբանությունը ավտոմատ կերպով չի դառնում Աստծունը: Հավատացյալները դեռևս մեղքի ներգործության տակ ընկնում են: Մենք պետք է իրար քաջալերենք, հորդորենք և Սուրբ Գրքից իրար սովորեցնենք, խորհրդածենք և ապրենք դրանք, սակայն միշտ սիրո մեջ: Որքան շատ ենք իմանում, այնքան հասկանում ենք, որ ոչինչ էլ չգիտենք (տես՝ 1 Կորնթ.13:12):

Դ. Մարդու գործողությունները գնահատելու իրական միջոցները Աստծո առջև նրա վերաբերմունքն ու շարժառիթներն են: Քրիստոնյաները կանգնելու են Քրիստոսի առջև դատվելու, թե ինչպես են միմյանց վերաբերվել (տես՝ Գործք 15:10,12 և 2 Կորնթ.5:10):

Ե. Մարթին Լյութերն ասել է՝ «Քրիստոնյան բոլորից ամենաազատ տերն է, որ չի ենթարկվում ոչ ոքի. Քրիստոնյան բոլորից ամենապատասխանատու ծառան է՝ ենթակա բոլորին»: Աստվածաշնչյան ճշմարտությունը հաճախ ներկայացվում է ծայրաստիճան պարադոքսալ վիճակում (<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՐԱԴՈՔՍԸ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ</u>):

Զ. Այս դժվար, սակայն շատ կարևոր նյութը արծարծվում է մի ամբողջ Հռոմեացիների 14:1-15:13 գրական բաժնում, ինչպես նաև 1 Կորնթացիների 8-10 և Կողոսացիների 2:8-23-ում:

Է. Այնուամենայնիվ պետք է ասել, որ անկեղծ նվիրումով հավատացյալների մեջ բազմազանությունը վատ բան չէ: Յուրաքանչյուր հավատացյալ ունի թե՛ առավելություններ և թե՛ թերություններ: Յուրաքանչյուրս պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո, միշտ բաց լինելով Հոգու և Աստծո Խոսքի ավելի շատ լույսի համար: Կյանքի դժվարին կացությունների ընթացքում էլ (1 Կորնթ.13:8-13) մարդը <u>պետք է</u> քայլի սիրո (Գործք 15:15) և խաղաղության մեջ (Գործք 15:17, 19) փոխադարձ շինության համար:

Ը. «Ավելի ուժեղ» և «ավելի թույլ» անվանումները, որը Պողոսը տալիս է այս խմբերին, նախատրամադրում է նրանց <u>մեր</u> հանդեպ: Անշուշտ սա Պողոսի մտադրությունը չէր: Երկու խմբերն էլ անկեղծ հավատացյալներ էին: Մենք չպետք է փորձենք ուրիշ Քրիստոնյաների ձուլենք մեր հետ: Մենք Քրիստոսի մեջ՝ Նրանով ենք իրար ընդունում:

Թ. Ամբողջ վիճաբանությունը կարելի է հակիրճ՝ համառոտ ներկայացնել որպես՝

1. իրար ընդունեք, քանզի Աստված էլ մեզ է ընդունում Քրիստոսով (տես՝ Հռոմ. 14:1,3, 15:7)
2. իրար մի՛ դատեք, քանզի Քրիստոսն է մեր միակ Տերն ու Դատավորը (տես՝ Հռոմ. 14:3-12)
3. սերն ավելի կարևոր է, քան անձնական ազատությունը (տես՝ Հռոմ. 14:13-23)
4. հետևե՛ք Քրիստոսի օրինակին և վայր դրեք ձեր իրավունքները հանուն ուրիշների շինության և բարօրության (տես՝ Հռոմ. 15:1-13):